ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1. ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1):

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը:
Իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի կազմման, ներկայացման, հաշվետվությունների ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքները: Ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը: Կազմում և ստորագրում է ֆինանսական փոստաթղթերը:
Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
-միջնակարգ կրթություն
-Հայաստանի Հանրապետության սահմանադրության, 'Համայնքային ծառայության մասին' ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
-տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:
-ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թվականի փետրվարի 28- ին ժամը 14 ^{00}-ին Լուսագյուղի գյուղապետարանի շենքում:
Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները աշխատակազմ կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
-դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս):
-Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին:
-հայտարարություններ (ձևը լրացվում է փաստաղթղթերը լրացնելիս):
-արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենները՝ իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք:
-մեկ լուսանկար 3x4 չափի.

-անձնագրի պատճենը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթղթերը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև ժամը 16.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012 թվականի փետրվարի 8-ը, Արևիկի գյուղապետարանում, հեռ. 6-71-80, կամ Արմավիրի մարզպետարանում, Աբովյանի փ. 71, հեռ. 6-07-70:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արևիկի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. 0237- 2-07-70, 2-46-49: